Visa Concierge ծառայություն

Visa Concierge ծառայությունը Visa Infinite և Visa Platinum քարտապաններին հնարավորություն է տալիս ծանոթանալու քարտի բոլոր առավելություններին մեկ վայրում:

Որևէ մեսենջերում միացնելով Visa Concierge չատբոտը՝ քարտապանները ձեռք են բերում վիրտուալ օգնական, որը թույլ է տալիս.



Ստանալ տեղեկություններ պրեմիում քարտերի հատուկ առաջարկների մասին



Կապ հաստատել Concierge ծառայության հետ՝ առօրյա խնդիրներն արագ ու հեշտ լուծելու համար



Ընդհանուր տեղեկատվություն ստանալ ճանապարհորդությունների ժամանակ հասանելի առավելությունների մասին, ինչպիսի են՝ Lounge Key ծրագրի շրջանակում բիզնես սրահներ անվճար մուտքը, ճանապարհորդական ապահովագրությունը, միջազգային բժշկական ապահովագրությունը, տեղեկատվական աջակցությունը և այլն:

Գրանցում Visa Concierge չատբոտում

Visa Concierge չատբոտում գրանցվելու համար Visa Infinite և Visa Platinum քարտապանները պետք է կատարեն հետևյալ քայլերը.

1. Գտնել Visa Chatnot-ը մեսենջերներից մեկում, այնուհետև սեղմել <սկսել և ընտրել լեզուն> (start and choose language) կոճակը,
2. Մուտքագրել հեռախոսահամարը կամ սեղմել <ուղարկել հեռախոսահամարը> (send phone number) կոճակը,
3. Մուտքագրել SMS հաղորդագրության միջոցով ստացված հաստատման կոդը,
4. Ընտրել <անունը> (name): Ձեր անձնական էջում կարող եք փոխել այն, ինչքան ցանկանաք,
5. Ծանոթանալ գաղտնիության քաղաքականությանը ընդունել այն: Վերջինս միշտ հասանելի է անձնական էջում,
6. Ընտրել պերմիում Visa քարտատեսակը: Եթե հաճախորդն ունի 2 և ավել քարտ, խորհուրդ է տրվում ընտրել դասով ավելի բարձրը: Քարտի տեսակը անձնական էջում հնարավոր է փոփոխել:

Visa Concierge չատբոտ ծառայությունը ներառում է.

1. Տեղեկատվություն և խորհրդատվություն
2. Կազմակերպչական բնույթի ծառայություններ

- Ամրագրում, պատվերներ և գնումներ ամբողջ աշխարհում
- Անձնական հիշեցումներ բոլոր կարևոր իրադարձություններ մասնի՝ ծննդյան տարեդարձներ, հանդիպումներ, մարզական միջոցառումներ, բժշկի այցելություններ և այլն (<Զարթոցիչ> ծառայություն)

3. Fast Track

Fast Track ծառայություն

Visa Infinite և Visa Platinum քարտապանները կարող են միջազգային օդանավակայաններում օգտվել Fast Track ծառայությունից, որն ավելի հարմարավետ ու անմոռանալի է դարձնում երկար սպասված ուղևորությունը: Քարտապանը կարող է հաշվառման գործընթացն օդանավակայանում անցնել առաջնահերթության սկզբունքով և ժամանակ խնայել հաճելի բաների համար:

Ինչպես օգտվել Fast Track ծառայությունից.

- Գրանցվել Visa Concierge չատբոտում,
- Հիմնական ընտրացանկում ընտրել Visa Travel-ը, այնուհետև Fast Track International տարբերակը,
- Ընտրել երկիրը և օդանավակայանը,
- Սեղմել առաջարկվող տարբերակներից մեկը՝ Մեկնում (Departure), Միջազգային մեկնում (International De parture) կամ Միջազգային ժամանում (International Arrival),
- Ներկայացնել պահանջվող տվյալները՝ Fast Track ծառայության համար QR պարունակող PDF ֆայլ ստանալու համար:

Visa Concierge չատբոտին միանալու համար կարող եք այնցնել հետևյալ QR կոդով

Լրացուցիչ տեղեկատվության համար՝

http://cis.visa.com/Visa Concierge